## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ՆՐԱ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

**Սոֆիա**

Հանուն հայ առաքելական եկեղեցու մեծ ուրախությամբ շնորհավորում ենք Ձեր ընտրությունը և աղոթում, որ Տերը Ձեզ պարգևի հովվապետական առաքելության շատ երկար տարիներ փայլուն արդյունքներով՝ ի փառս բուլղար ժողովրդի քրիստոնեական հավատքի ու մշակույթի:

Ընդունեցեք նաև անկեղծ համակրանքը և սերը ամբողջ հայ հոգևորականության և ժողովրդի, որոնք պատմականորեն և այնքան անկեղծորեն եղբայրացած են ձեր եկեղեցու և ձեր ազնիվ ժողովրդի զավակների հետ:

Թող միշտ պայծառ մնա մեր եկեղեցիների և ժողովուրդների պատմական բարեկամությունը:

Ձեր հարազատ Եղբայրը ի Քրիստոս՝

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**
**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

31-ը հուլիսի 1971 թ.,
Ս. Էջմիածին